ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«27» 03 2024թ.
No 003271

**«Գ.Գ.Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**
(հասցե՝ Արարատի մարզ, Վերին Արտաշատ, Նար-Դոսի փողոց, տ. 20)

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի մարտի 25-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 19-ի թիվ 198-Ա որոշմամբ հարուցված վարույթը վերսկսելու մասին» թիվ 124-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Զարուհի Մելքումյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (240)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 20 մայիսի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2024 թվականի թիվ 124-Ա

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԹԻՎ 198-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի մարտի 25-ի նիստում, քննարկելով Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 19-ի թիվ 198-Ա որոշմամբ հարուցված վարույթը վերսկսելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2021 թվականի օգոստոսի 19-ի թիվ 198-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 198-Ա որոշում**) «Գ.Գ.Գ. Մանուկյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) և Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի (այսուհետ նաև՝ **Գրասենյակ**, նախկինում՝ Գործակալություն) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ հարուցել է վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է Ընկերության և Գրասենյակի կողմից Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ 2020 թվականի մարտի 3-ին կայացրած ««Գ.Գ.Գ. Մանուկյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 65-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 65-Ա որոշում**) նկարագրված իրավախախտումներին փաստական կազմով նման գործողություններ և վարքագիծ դրսևորելու փաստի առերույթ առկայության հիմքով: Մասնավորապես՝ թիվ 65-Ա որոշմամբ Ընկերության կողմից «Afrodita» և «Argo Neo» նշանները Ընկերության անվամբ գրանցման հայտ ներկայացնելն այն դեպքում, երբ «Վենտոնի Կոսմետիկս» ընկերության կողմից Ընկերությանը չի տրվել թույլտվություն Հայաստանի Հանրապետությունում այդ նշանները վերջինիս անվամբ գրանցելու համար, ինչպես նաև Գործակալության կողմից «Afrodita» և «Argo Neo» նշանների

գրանցումն առանց այդ ապրանքային նշանների իրավատեր «Վենտոնի Կոսմետիկս» ընկերության թույտվության որակվել են որպես Ընկերության կողմից կատարված անբարեխիղճ մրցակցության գործողություն, իսկ Գործակալության կողմից՝ պետական մարմնի կողմից հակամրցակցային գործողություններ:

Միաժամանակ, Վարույթը հարուցվել է նաև «AFRODITA» ապրանքային նշանի օգտագործման մեջ լինելու մասին առնվազն թիվ 65-Ա որոշմամբ եզրափակված վարչական վարույթի մասին տեղյակ լինելու պարագայում 2020 թվականի փետրվարի 12-ին Ընկերության կողմից իր անվամբ «AFRODITA» ապրանքային նշանի (գրանցման հերթական համարը՝ թիվ 30317) գրանցումն առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, իսկ Գործակալության գործողությունների մասով՝ պետական մարմնի հակամրցակցային գործողության հատկանիշներ պարունակելու հիմքով:

Թիվ 65-Ա որոշմամբ որոշվել է.

1. «Գ.Գ.Գ. Մանուկյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ սույն որոշմամբ նկարագրված գործողություններն ու վարքագիծը որակել որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) խախտում:

2. Օրենքի խախտման համար «Գ.Գ.Գ. Մանուկյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ նախազգուշացում:

3. Հանձնարարել «Գ.Գ.Գ. Մանուկյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) մեկամսյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը:

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված հանձնարարականը կատարելուց հետո 3-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ.

3) հետագայում բացառել Օրենքի խախտումը:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ սույն որոշմամբ նկարագրված գործողությունները որակել որպես պետական մարմնի հակամրցակցային գործողություն:

5. Սույն որոշման 4-րդ կետում նշված խախտման համար Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը տալ նախազգուշացում:

Թիվ 65-Ա որոշումը դատական կարգով բողոքարկվել է Ընկերության կողմից (վարչական գործ՝ թիվ ՎԴ/2328/05/20):

Հաշվի առնելով, որ թիվ ՎԴ/2328/05/20 վարչական գործով էական նշանակություն ունեցող փաստերը որոշակիորեն նույնանման են Վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող փաստերի հետ, որպիսի պայմաններում Վարույթի իրականացումն անհնարին է առանց թիվ ՎԴ/2328/05/20 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով լուծվելիք իրավական հարցերի՝ Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 285-Ա որոշմամբ Վարույթը կասեցրել է մինչև թիվ ՎԴ/2328/05/20 վարչական գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքի (Datalex.am) տվյալների համաձայն՝ թիվ ՎԴ/2328/05/20 վարչական գործի քննությունն ավարտվել է, և տվյալ գործով եզրափակիչ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2024 թվականի մարտի 25-ի թիվ ՄՊՀ-003140 զեկուցագրով առաջարկել է Վարույթը վերսկսել:

Օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարույթը կասեցվում է մինչև այն կասեցնելու հիմք հանդիսացած հանգամանքների վերանալը կամ վարույթի կարճման հիմքի ի հայտ գալը: Դրանք վերանալուց կամ վարույթի կարճման հիմքի ի հայտ գալուց կամ առաջանալուց հետո Հանձնաժողովի որոշմամբ վարչական վարույթը վերսկսվում է:

Վերոգրյալ նորմի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վարույթի կասեցման հիմքերը վերանալու դեպքում կասեցված վարույթը ենթակա է վերսկսման:

Հաշվի առնելով, որ թիվ ՎԴ/2328/05/20 վարչական գործով եզրափակիչ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, այսինքն՝ Վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքը վերացել է՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթն անհրաժեշտ է վերսկսել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով և 65-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերսկսել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 19-ի թիվ 198-Ա որոշմամբ հարուցված վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 25
Երևան